

Այս ժամանակաշրջանին յատկանշական S-աձև գալարուն նախշերի իմաստը բացայայտելուն նպաստում է բուլղարական «տիկնիկ» կոչուող հացը, որը թխուում է հարսանիքի, Զատիկի եւ այլ տոների ու ծէսերի կապակցութեամբ: Այն ունի ճիշտ նոյն նախշաձեւը (նկ 3): Աղջիկները «տիկնիկներ» են ստանում բոլոր այն տներէց, որոնց համար բարեմաղթանքի երգեր են երգում Մաղկազարդին նախորդող Ղազարոսի շաբաթ օրը (ՌԱՅԱՐՈՅԵՆ): Միսական երթից յետոյ նրանք «տիկնիկը» ջուրն են գցում⁴: Ռուսները եւս ծիսական արարողութիւններով պտղաբերութիւնը խթանելու համար այս նախշով են զարդարում հարսանիքի, ձմեռային ու գարնանային տոների առթիւ թխուող հացերը⁵: Այսպիսով, բրոնզէ պարանջանի եւ կախիկների պարուրածն նախը, որի ձեւն ու իմաստը պահպանուել են զանազան ժողովուրդների աւանդոյթներում, մէկ անգամ եւս ցոյց է տալիս գորտի իգական սեռին պատկանելն ու նրա անմիջական կապը պտղաբերութեան գաղափարի հետ:

Հայերի հաւատալիքներում նախապէս գորտի կերպարանքով էր պատկերացուում Նար աստուածուհին: Ինչպէս նկատել է Ս. Հայկունին. «Նարը պատենաւորուած է գորտի տգեղ արտաքինի մէջ, որն ինչպէս հայկական բազմաթիւ հեքիաթներում, նմանապէս եւ մեր հարեւան ժողովուրդների Ֆոլկլորի մէջ հանրահռչակ գեղեցկուհու համբաւ ունի»⁶: Ժամանակի ընթացքում Նար աստուածուհու մարմնաւորումն է դարձել «Նուրին» կոչուող «անձրեւաբեր» տիկնիկը, որը պատրաստուում էր աւելից, ցախաւելից, փայտերից: Նրան շորեր էին հագցնում կամ փաթաթում լաթերով⁷: Նուրինը պատկերուում էր «տիկնանի» կոչուող կարպետանախշերում, որոնցից շատերն ունեն S-աձև

նախշ (գալարուն մասերի փոխարէն անկիւնաձեւ), (նկ. 4): Նմանատիպ փայտէ փորագրագարդ «տիկնիկներ» էին սարքում եւ որպէս հմայական պահպանակ կախում ալիւրի ամբարի պատից (նկ. 5):

Նար-Նուրինի կապը հացի եւ հացահատիկի հետ՝ մի կողմից, եւ գորտի հետ՝ միւս կողմից, առաւել ակնառու է Մաղկազարդի տօնին եւ երաշտի ժամանակ «անձրեւ բերելու» ծէսը կատարելիս: Այսպէս, մի դէպքում ուխտի էին գնում գորտաբարերին, կենդանիներ զոհաբերում, աղաւնիներ բաց թողնում ու վրան ջուր լցնում⁸: Միւս դէպքում՝ աղջիկների խումբը տնից տուն էր տանում «Նուրին», որին հացահատիկ, ալիւր, հաց, խաւիճ, աղ, ձէթ, դրամ էին նուիրաբերում եւ վրան ջուր լցնում: Դեռ աւելին՝ Նուրինը կարմիր կովի իւղ եւ սեւ հաւի ձու էր «պահանջում»⁹: Աղջիկների խումբը երգում էր.

Նուրին Նուրին եկել է,
Ծալէ շապիկ հագել է,
Կարմիր գօտիկ կապել է
Մեր Նուրինին փայ տուէք,
Տաշտերով ալիւր բերէք.
Մաղերով ջուր բերէք,
Մեր Նուրինին կշտացնենք,
Ուտենք-խմենք, քեֆ աճենք:

Տանտիրումիները պատասխանում են՝
Մեշկներդ պիճի էղճի,
Կամքերդ ամուր էղճի,
Հացը թեժ էղճի:

Խումբը մաղթում է՝
Տաշտդ ու մաղդ լիք էղճի,
Քո հացդ առատ էղճի,
Գերամդիճ ջկարայ կտրի:

Միեւնոյն ծէսի այլ տարբերակում մեծահասակ կանայք էին տնէտուն գնում եւ առանձին-առանձին պարկերով ու ա-

մաններով հաւաքում վերոյիշեալ սննդամթերքը¹⁰: Բոլոր դէպքերում վերջում «Նուրինին» գետն էին գցում կամ ընկղմում աղբիւրի աւազանում, որեւէ վանքի կամ սրբատեղիի մօտ մատաղ էին անում¹¹ եւ, ինչպէս երգում է ասում, «ուտում-խմում քեֆ էին անում»:

Վրաստանի գիւղերում աղջիկները բուլղարացիների նման «Հազարէ» կոչուող տիկնիկ էին սարքում¹², որը համեմատելի է Լոռու «Նազարոյի» հետ՝ «Նուրին Նուրին Նազարոյ էս Նազարոն եկել ա...»¹³: Այս հանգամանքը կրկին անգամ հաւաստում է, որ հացէ տիկնիկն ու «Նուրինը» հացահատիկի միեւնոյն ոգու կամ աստուածութեան տարբեր կերպարանաւորումներն են, յատկապէս որ զանազան ժողովուրդների բերքահաւաքի ծէսերում հացահատիկի վերջին խրճից պատրաստուած «տիկնիկը», «հացի մայրը» կամ «թագուհին» նոյն ձեւով տնէտուն ման ածելուց յետոյ գետն էին գցում կամ վրաները ջուր լցնում:

«Նուրինի» ծէսն իր նախնական անաղարտ ձեւով, այսինքն՝ դեռեւս գորտի կերպարանքով է պահպանուել Հնդկաստանում: Այնտեղ կենդանի գորտին կապում են ճիւղին եւ տնէտուն շրջելով երգում. «Շուտով ի՛նձ տուր, գո՛րտ, կենարար խոնաւութիւն: Թող շուտ հասունանան ցորենն ու կորեկը դաշտերում»:
Կամ հացահատիկի քամհարին կապած գորտով տնէտուն շրջելով երգում. «Տիկնի գորտը կամենում է լողանալ: Անձրեւի՛ աստուած, գոնէ մի քիչ անձրեւ տուր նրա համար»: Եւ կրկին ամէն մի տան տիրուհի գորտի վրայ կժով ջուր է դատարկում, որպէսզի յորդառատ անձրեւ գայ¹⁴:

Գորտի եւ Նուրինի հետ իմաստային ընդհանրութիւններ ունի նաեւ օձը: Նախ «Նուրինի» բոլոր երգերում շեշտուում է

նրա գօտին, որը ծիսածանի խորհրդանիշն է¹⁵, իսկ ծիսածանն իր հերթին՝ օձի եւ անձրեւի¹⁶:

Փենջաբում օգոստոս ամսին գորտի եւ «Նուրինի» նման ծիսական արարողութիւններ էին կատարում խմորէ օձի միջոցով, որին սեւ ու կարմիր էին ներկում, դնում հացահատիկը քամհարելու զամբիւղը, տանում տնէտուն եւ բլիթ ու իւղ էին խնդրում: Բայց յաճախ խմոր էին ստանում եւ հացահատիկ: Այն ընտանիքները, որտեղ մօտ ժամանակներում երիտասարդներին ամուսնացրել էին, կամ տղայ էր ծնուել, մէկ եւ քառորդ ուռւփի էին տալիս ու որեւէ հագուստ: Այնուհետեւ խմորէ օձը թաղում էին, վրան գերեզմանաքար դնում, իսկ յաջորդ ամիս 9 օր շարունակ կանայք այդտեղ էին գնում աղօթում եւ կաթնաշոռ էին զոհաբերում օձին¹⁷, իսկ եթէ որեւէ մէկը օձ էր սպանում, այն այրում էին մարդու նման եւ յաջորդ օրը վրան կաթ լցնում¹⁸: Հայաստանում էլ մինչեւ այժմ տանը յայտնուած օձին կաթ են հրամցնում: Իսկ օձաձեւ ծիսական հաց թխելու սովորոյթը պահպանուել է նաեւ Բուլղարիայում¹⁹: Կանգ առնելով հնդկական ծէսում օձին մատուցուող խմորի զոհաբերութեան փաստի վրայ՝ արժէ յիշել, որ Հայաստանում այն պահպանուել է մասնաւորապէս Կուրաթ դեւի աւանդութիւնում. Լուսակորիչն այս դեւին թոյլ էր տուել Սուրբ Կարապետի վանքում աշխատել որպէս փոշեհան: Մայրավանքի տնտեսուհին էլ ամէն օր թոնրի ակի մէջ դնում էր մի գունդ խմոր, որը եւ նրա սնունդն էր²⁰:

Դառնալով հնագիտական նիւթերին՝ պէտք է ասել, որ հացի, օձի եւ պտղաբերութեան միւս խորհրդանիշները լայնօրէն տարածուած են Հայաստանի բրոնզի եւ վաղ երկաթի դարաշրջանների յուշարձաններում: Այսպէս, Դուրինի եւ Մեծամօ-

րի տաճարներում օգտագործուող Հացահատիկի ծիսական կարասների վրայ օձեր են քանդակուած եւ Հասկեր²¹: Հասկերի, օձերի եւ ոգիների պատկերներ ունի Հայաստանի պատմութեան պետական թանգարանում պահուող Ք. ա. II-րդ հազարամեակի կաւէ սափորը (2480/27, գ. Ենոքաւան, Իջեւան)²²: Սա անկանոն փորագրութիւններով այնպէս է նախշադարուած, կարծես ամբողջութեամբ ծածկուած է Հասկերով ու Հատիկներով: Ունի 7 հիմնական զարդագօտի, բունակի վրայ եւ նրանից ներքեւ, մի քանի օձերի իսկ երկու կողմերում, ոտքերն ու ձեռքերը տարածած, ուռուցիկ փորերով ոգիների բարձրադիր քանդակներ կան: Բունակի կողերին Հասկաձեւ փորագրանախշեր են արուած (նկ. 6): Հասկաձեւ նախշերով ծածկուած ալիքաձեւ 4 օձեր են քանդակուած Ք. ա. 12-11-րդ դդ. կաւանօթի վրայ (1791, Սանահին): Օձերի գլուխները Հանգչում են սափորի բերանի Հարթ կտրուածքի շուրջը փորագրուած Հասկաձեւ նախշերի վրայ²³:

Հնում պաշտուող Հացի օձակերպ աստուածութեան գաղափարը պահպանուել է «գովլաթ» («տէօվլաթ») եւ «բարաքաթ» կոչուող օձերի տեսքով տան բարի ոգիների կերպարներում²⁴, որոնք յատկապէս ալիւրի ամբարի վրայ էին բնակուած: Նաեւ, ըստ աւանդութեան, եթէ օձի բերնից ընկած ուլունքը զցեն ալիւրի շտեմարանը, ալիւրն անսպառ կը դառնայ²⁵:

Այս օձերին բնորոշ հիմնական յատկանիշներից էր Հացահատիկի բերքը պահպանելն ու նորը երաշխաւորելը: Նրանք «պաշտպանում էին» մայր հողը խորհրդանշող կին աստուածութիւնների որովայնը²⁶ եւ տարբեր ձեւերով պատկերուած նրանց Հետ, ինչպէս օրինակ՝ Դեմետրան՝ ձեռքերում Հասկերով եւ թեւերին փաթաթուած օձերով²⁷: Նոյն դերով

է Հանդէս եկել նաեւ Հին եգիպտական պտղաբերութեան եւ Հացահատիկի բերքի Ռեննութեթ աստուածուհին՝ «պտղաբերութեան վեհապետուհին», «ամբարների տիրակալը»: Նա օձի կամ օձագլուխ կնոջ տեսքով էր պատկերուած, առատութիւն, Հարստութիւն, երջանկութիւն էր շնորհում մարդկանց եւ օգնում էր ծննդաբերող կանանց: Նա Հուլնձքի ժամանակ յայտնուում էր արտում՝ Հետեւելու Համար բերքահաւաքի ճշտակատարութեանը²⁸ (Հմմտ. Հուլնձքի ժամանակ դաշտում յայտնուած կենդանին՝ որպէս Հացի ոգի 29): Սասունցիների Հաւատալիքների Համաձայն Հացի օձակերպ ոգին մտնում է Հնձուած վերջին խրճի մէջ³⁰:

Հացի, Հացահատիկի զոհաբերութեան եւ կրակի ու օձի պաշտամունքի Հետ են առնչուում Հին սրբարանների կրակարանները. լաւագոյն օրինակներից մէկն է Դուինում պեղուած տաճարի զոհասեղանը օձի, Հասկի եւ աստուածութիւնների կամ ոգիներ քանդակներով³¹: Ի դէպ, միեւնոյն իմաստային կապը Կեսարիայում պահպանուել էր մինչեւ XX դ. սկիզբը անձրեւ բերելու ծէսում՝ օձը վառելով եւ նրա մոխիրը չորս կողմ ցրելով³²: Թէ՛ Դուինի եւ թէ՛ Մեծամօրի Ք. ա. II-I հազ. տաճարներում, զոհասեղանների մօտ, կենդանական մատաղի ոսկորներից զատ, գտնուել են ցորեն մշակելու եւ ալիւր սարքելու աղորիքներ եւ սանդեր, նուիրաբերուող օրհնուող Հացահատիկի պահեստանոցներ: «Կրակարանի մասերի կողքին, - գրում է է. Խանգանդեանը, - յայտնաբերուել է Համակենտրոն ռելիէֆ շրջաններով զարդարուած... շրջանաձեւ կաւէ իր, կողքին՝ նրանից երկու անգամ մեծ կաւէ շրջանակ, որը ... յիշեցնում է կլոր Հաց... նրանք սրբազան Հաց. սրբազան բլիթ են խորհրդանշել եւ որպէս «մասունք» պահուել

սրբարանում...»³³: Սրա առնչութեամբ տեղին է յիշատակել 19-20-րդ դդ. սարքուող ծիսական հողէ բլիթները «Նուրի-նի» Հետ կապուած վերոյիշեալ արարողութեան ժամանակ. տնից տուն շրջող երեխաներից երկուսը լուռ էին մնում, նրանց ձեռքը ցելս էին տալիս, որի վրայ աղ ցանելով՝ նրանք մի մեծ բլիթ էին սարքում եւ պատին խփում: Կամ էլ եօթ դունից ցելս էին Հաւաքում, եօթ գնդիկ սարքում, ապա քահանայի տնից մի աւել գողանում, վառում եւ այդ գնդիկները մէջը դրում³⁴: «Մեծամօրի երկրորդ սրբարանի արեւելեան պատի տակ կառուցած վառարանի մէջ ծիսակատարութեան Համար բլիթ եւ կամ Հաց են թխել սկաւառակաձեւ սաջի, ծիսական սրբազան Հացերի գոյութեան Հաւաստումն են նաեւ Հացերը նախշող դրոշմիչները»³⁵, որոնք Հայաստանում մինչեւ այժմ ներառեալ ամէնուրեք տարածուած «գաթանախշերի» նախատիպերն են (նկ. 7):

Հնում զոհաբերուող Հացը թխելու վերաբերեալ մանրամասն տեղեկութիւններ են տալիս Ք. ա. II հազարամեակի կաւանօթի (123, Նոր Բայազետ) քանդակները՝ մի կողմում խոյ, միւս կողմում՝ Հաց թխող կին, որը ցածրադիր սեղանի կի կողքին նստած աջ ձեռքով խմոր է հուլնցում: Սեղանիկի վրայ դրուած են խմորի գնդերը: Կնոջ մօտ առաջինից աւելի փոքրիկ խոյ է կանգնած (նկ. 8, 9): Ողջ յօրինուածքը ցոյց է տալիս, որ Հաց թխելու պարագաներն ու ձեւերը մ. թ. ա. II հազարամեակից անփոխոյն կերպով պահպանուել են ցայսօր: Այստեղ ոչ միայն Հացի, այլեւ խոյի զոհաբերութիւնն է «պատկերուած», որն արտացոլուել է նաեւ մատաղի ծիսական երգում:

Սուրբ Կարապետ երկայն խաչեր,
Ոտքըդ կուգան մանրը մանչեր.

Մատաղ կ'անեն սեւ-սեւ խոչեր...³⁶

Քանի որ զոհաբերուող ամենատարածուած կենդանիներից է խոյը, իսկ Սուրբ Կարապետը Հայաստանի նախաքրիստոնէական եւ քրիստոնէական պաշտամունքային կարեւորագոյն կենտրոններից էր³⁷:

Ինչպէս վերը նշուեց, Հացի մատաղ էին անում նաեւ աղբիւրներին, ջրային այլ ոգիներին: Հարսանիքից անմիջապէս յետոյ եւ երեխայ ունենալուց 40 օր անց առաջին անգամ աղբիւր գնացող Հարսները ցորեն, Հաց եւ որ անանձնապէս ուշագրաւ է՝ անալի Հաց էին տանում աղբիւր³⁸: Անալի Հացի զուգահեռն է առանց աղի եփուող կենդանիների մատաղը եւ իհարկէ նշխարքը, որոնց շնորհիւ ընդգծուում է աղբիւրներին զոհաբերուող Հացի կարեւորութիւնը:

Կենդանական աշխարհի Հետ կապուած ոգիներից նաեւ թռչուններին էր զոհաբերում Հացը: Կրօնական պատկերացումներում թռչունները աստուածային էութիւն ունեն, խորհրդանշում են վերը, կեանքը, պտղաբերութիւնը, աճը, իրականացում են այս եւ այն աշխարհների կապը եւ այլն³⁹: Թռչուններին սիրաշահում էին, որպէսզի նրանք ապահովէին բերքի առատութիւնը: Նրանց Հաց ու Հացահատիկ էր տրուում որոշակի ծէսերի ու տօների ժամանակ: Գարնանը սերմ ցանելու ծէսն ուղեկցող, արտերի ոգիներին նուիրուած երգերից մէկում ասուում է.

Անունն ի Աստուծոն,
Դու տաս յաջողում.
Էս մէ բունն անցոտրակամի,
Էս մէգն էլ թռչուններին,
Էս էլ աղքատներին.
Ըլուսն-թուլուն,
Կերէք իմ ցանածից,
Կշտացէք.

Հաց թխելիս անհրաժեշտ էր համարուում առաջին հերթին վերցնել թթվածորը, խաչակնքել ու դնել, որովհետև թթվածորի ոգին այդ ընթացքում 7 անգամ զնուում էր Երուսաղեմ, Լոյս գերեզմանը համբուրում եւ վերադառնում: Եթէ թթվածորը չխաչակնքուէր, Հացի ոգին կ'ուշանար եւ երբ ուզենար գնալ Երուսաղեմ, արդէն կը հանդիպէր այնտեղից վերադարձող ոգիներին քարաւանին եւ կը գանգատուէր, ասելով. «անքան թաթակիշ եմ կերէ օր թեւերս կողոտեր է»: Եւ երբ երեկոյեան տան պահապան հրեշտակը գար ու դուռը թակէր, թթվածորի ոգին դուռը չէր բանայ եւ կրկին կը գանգատուէր⁷⁹: Ընտանիքը կը զրկուէր բարի ոգու հովանաւորութիւնից:

Հացի զոհաբերութիւնն այնքան կարեւոր նշանակութիւն ունէր, որ ոչ միայն սոսներին ու ծէսերին էր կատարուում, այլեւ ամէն անգամ Հաց թխելիս: Նոյնիսկ մոգարգել գոյութիւն ունէր՝ «Ով որ թոնրից դուրս եկած առաջին Հացն ուտի, ամուսինը կը մահանայ կամ կինը»: Այսպիսով, առաջին Հացը (մեծամասամբ 7 Հացերը) բաժանում էին մարդկանց եւ շանն էին տալիս: Շանը տրուող Հացը Հանգուցեալների հոգիներին մատուցուող զոհաբերութիւններից է, այն հաւատքի վերապրուկն է, որի համաձայն շունը նախնու հոգու կրողն է (հմտ. «շան որդի» եւ «հերդ շուն դառնայ» հայհոյանք ու անէծք դարձած արտայայտութիւնները): Զրադաշտական աւանդոյթում շանը տրուող կերակուրները (նաեւ ծիսական) մահացած, ազգային ու մտերիմ մարդկանց բաժինն են: Շանը կերակրում են արեւը մայր մտնելուց անմիջապէս յետոյ՝ ֆրաւաշներին պատկանող ժամանակահատուածում: Շան Հացը բաժանում են երեք մասի եւ մինչեւ նրան չեն կերակրում, չեն կպչում ծիսական սրբազան ուտեստներին⁸⁰:

Հայկական աւանդութիւններից մի քանիսում Հացը շան շնորհիւ է աշխարհ եկել, դրա համար են նրան տալիս առաջին Հացը⁸¹:

Նախաքրիստոնէական ծէսերում կատարուող Հացի զոհաբերութիւնը Աւետարանական զոհաբերութեան հետ համեմատելուց հետեւում է, որ սրանք արմատապէս տարբեր նպատակներ ունեն: Հին հաւատքում Հացի զոհաբերութիւնը, ի տարբերութիւն քրիստոնէականի, չէր կատարուում հաղորդուելու եւ մեղքերը քաւելով մաքրուագործուելու համար, այլ կատարում էր Հացի ոգու զոհաբերութեամբ, ծիսական-հմայական գործողութիւններով ցանկալի արդիւնքին հասնելու, պտղաբերութիւն ապահովելու համար, եւ, Հացի հետ կապուած աստուածութիւններին ընծաներ մատուցելով, կրկին արգասաբերութիւն, առատութիւն, հարստութիւններ ակնկալուում: Մի խօսքով՝ տալիս էին, որպեսզի ստանային եւ սրա լաւագոյն դրսեւորումն է. «Աստուած՝ ո՞ւմ էի մի կտոր Հաց տուել, որ առաջս եկաւ» արտայայտութիւնը:

ՇԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ


- 1 Վ. Բոդյեան, *Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մէջ*, «Աշխատութիւններ Հայաստանի պետական պատմական թանգարանի», Բ. 3, Երեւան, 1950, էջ 43:
- 2 Ե. Լալայեան, *Վասպուրական*, «Ազգագրական հանդէս», գիրք 25, Թիֆլիս, 1914, էջ 47:
- 3 Փակագծերում նշում են Հայաստանի պատմութեան պետական թանգարանում պահուող առարկաների անձնագրերի հերթական համարները եւ ծագման վայրերը:
- 4 Станка Янева, *Български обредни хлябове*, София, 1989, с. 70-72.
- 5 Л. С. Смусин, *К вопросу о спиралевидных мотивах в русском печенье*. Советская этнография, 5, Москва, 1979, с. 127-128.
- 6 Ս. Հայկունի, *ժողովրդական վէպ եւ հեքիաթ*, «Էմինեան ազգագրական ժողովածու», Բ. Բ. Մուկուտա-Վաղարշապատ, 1901, էջ 198-216, Վ. Բոդյեան, նշ. աշխ. էջ 7:
- 7 Վ. Բոդյեան, նշ. աշխ., էջ 58:
- 8 Վ. Բոդյեան, նշ. աշխ., էջ 9-10:

- 9 Լ. Մելիքեթ-Բեկ, *Նորին Նազարէի երգի բանալին*, «Գիտական ժողովածու՝ Առիթուն Հայաստանում սովետական իշխանութեան հաստատման 20-ամեակին», Երեւան, 1941, էջ 189:
- 10 Վ. Բոդյեան, նշ. աշխ. էջ 55-57:
- 11 Վահան վարդապետ Տէր-Մինասեան, *Անգիր դպրութիւն եւ առակք*, Բ. Բ. Վ. Պոլիս, 1893, էջ 99-104:
- 12 Լ. Մելիքեթ-Բեկ, նշ. աշխ., էջ 193:
- 13 Ե. Լալայեան, *Բորչալուի գաւառ*, «Ազգագրական հանդէս», 10, Թիֆլիս, 1903, էջ 201:
- 14 Дж. Дж. Фрэзер, *Золотая ветвь*, вып. I, Москва-Ленинград, 1931, с. 92.
- 15 Վահան վրդ. Տէր-Մինասեան, նշ. աշխ. էջ 101:
- 16 Дж. Дж. Фрэзер, *Золотая ветвь*, Москва, 1980, с. 87.
- 17 Նշ. աշխ. էջ 595:
- 18 Նշ. աշխ. էջ 253:
- 19 Станка Янева, с. 74.
- 20 Վահան վրդ. Տէր-Մինասեան, նշ. աշխ. էջ 148-149:
- 21 Է. Խանգաղեան, *Մեծամոր*, Երեւան, 1978, էջ 124-127:
- 22 Խորին երախտագիտութիւնն եւ յայտնում հնագէտ Մարիամ Մելքոնեանին կաւանօթները հրատարակմանը տրամադրելու համար:
- 23 *Armenie Trésors de l'Armenie ancienne*, Paris 1996 p. 75.
- 24 Ե. Լալայեան, «Ազգագրական հանդէս», 25, Թիֆլիս, 1914, էջ 57: Վ. Պետրոյեան, Սաւա ազգագրութիւնը, Երեւան 1965, էջ 201:
- 25 Ե. Լալայեան, *Բորչալուի գաւառ*, «Ազգագրական հանդէս», 10, էջ 196:
- 26 Б. А. Рыбаков, *Космогония и мифология земледельцев энеолита*. Советская археология, I, М., 1965, с. 36-37.
- 27 Н. М. Лосева, Н. А. Сидорова. *Искусство Этрурии и древней Италии*. М., 1988, с. 87.
- 28 Мифы народов мира, т. II, М., 1982, с. 378.
- 29 Дж. Дж. Фрэзер, *Золотая ветвь*, вып. III, 1928, с. 162.
- 30 Հաղորդել է ազգագրագէտ Մարիետա Կիրակոսեանը:
- 31 К. Х. Кушнарера, *Древнейшие памятники Двина*, Ереван, 1977, с. 20.
- 32 Արշակ Ալաօյանեան, *Պատմութիւն հայ Կեսարիոյ*, Բ. Բ. Գահիրէ, 1937, էջ 1790.
- 33 Է. Խանգաղեան, Մեծամոր, էջ 115-116:
- 34 Լ. Մելիքեթ-Բեկ, նշ. աշխ., էջ 191:
- 35 Է. Խանգաղեան, նշ. աշխ. էջ 115-117, 184-185:
- 36 Վահան վրդ. Տէր-Մինասեան, *Անգիր դպրութիւն եւ առակք*, Բ. Բ. Վ. Պոլիս, 1893, էջ 8:
- 37 Ս. Գ. Հմայակեան, *Կուեռա-Կուառ աստուածութեան պաշտամունքը Հայկական լեռնաշխարհում*, «Պատմա-բանասիրական հանդէս», 1, Երեւան, 1990, էջ 158-159: Ս. Յարութիւնեան, *Մշոյ Սուրբ Կարապետ եկեղեցու պաշտամունքային նախահիմքը եւ Ս. Կարապետի կերպարը*


- ըստ ժողովրդական ասանդութեան*, «Հայոց սրբերը եւ սրբավայրերը», Երեւան, 2001 թ.
- 38 Մ. Աբեղեան, *Երկեր*, Է, Երեւան, 1975, էջ 5: Ե. Լալայեան, *Չանգեզուր*, «Ազգագրական հանդէս», Դ, Թիֆլիս, 1898, էջ 89:
 - 39 *Мифы народов мира*, т. II, М., 1982, с. 346
 - 40 Ա. Ղանալանեան, *Հայ շինականի աշխատանքային երգերը*, Երեւան, 1937, էջ 100-101:
 - 41 Վ. Բոդյեան, նշ. աշխ. էջ 29-30, Էմինեան ազգագրական ժողովածու, Բ. Թ, Թիֆլիս, 1913, էջ 472:
 - 42 Վ. Բոդյեան, նշ. աշխ. էջ 29-30:
 - 43 Վահան վրդ. Տէր-Մինասեան, *Անգիր դպրութիւն*, Բ. Բ, էջ 5:
 - 44 Б. Б. Пиотровский, *История и культура Урарту*, Ереван, 1944, с. 243. Վ. Բոդյեան, նշ. աշխ. էջ 12:
 - 45 Б. Б. Пиотровский, *Ванское царство*, Москва, 1959, с. 177.
 - 46 Կ. Վ. Մելիք-Փաշայեան, *Անահիտ դիցունու պաշտամունքը*, Երեւան, 1968, էջ 94:
 - 47 Ե. Լալայեան, *Վասպուրական*, «Ազգագրական հանդէս», 25, էջ 47-48:
 - 48 Ե. Լալայեան, «Ազգագրական հանդէս», 10, էջ 249:
 - 49 И. В. Рак, *Мифы древнего и раннесредневекового Ирана*, Санкт-Петербург-Москва, 1998, с. 94.
 - 50 Սնակ. Puro-dás - զոհաբերութեան քրճէ կարկանդակ, որը մատուցում է կտոր-կտոր, մէկ կամ մի քանի ախւէներով *В. А. Кочергина, Санскритско-русский словарь*. Москва, 1978, с. 399.
 - 51 В. В. Иванов, В. Н. Топоров, *Исследования в области славянских древностей*. Москва, 1974, с. 256-257.
 - 52 Գ. Շաղոյեան, *Աւանդական «Եզ մորթելու» եւ արդի «տորթ կտրելու» հարսանեկան ծէսերի տոնական ենթատեքստը*, «Հայ ժողովրդական մշակոյթ», 10, գեկուցումների հիմնադրոյթներ, Երեւան, 1999, էջ 57-59:
 - 53 Վ. Բոդյեան, նշ. աշխ. էջ 31:
 - 54 Քաջբերունի, *Հայկական սովորութիւններ*, «Ազգագրական հանդէս», 7-8, Թիֆլիս, 1901, էջ 123:
 - 55 Ե. Լալայեան, *Վասպուրական*, էջ 44: Ե. Լալայեան, *Երկեր*, Բ. 1, Երեւան, 1988, էջ 249:
 - 56 Յ. Մուրադեանց, *Համբէնցի հայեր*, «Ազգագրական հանդէս», 2, Թիֆլիս, 1900, էջ 118-119:
 - 57 Վ. Բոդյեան, նշ. աշխ. էջ 30-31:
 - 58 Բ. Հ. Բաղրամեան, *Արդարեւանդեան հայերէն բանասիրան*, 1987, էջ 107: Պարսկերէն բառար. В. Миллер, *Персидско-русский словарь*. Москва, 1953, с. 54. С. В. Бернштейн, *Болгарско-русский словарь*. Москва, 1975, с. 36. Х. К. Баранов, *Арабско-русский словарь*. Москва, 1977, с. 67.

- 59 D. Olderogge, *The Deity of the Corn-Power*. Кружок по изучению Древнего Востока при Эрмитаже. Ленинград, 1933, с. 34-38.
- 60 Վ. Պետրյան, *Մայնայ ազգագրություն*, էջ 217:
- 61 Дж. Дж. Фрэзер, *Золотая ветвь*, вып. 3, с. 140-145.
- 62 Վ. Բդոյեան, նշ. աշխ. էջ 33: *Мифы народов мира*, т. 2, с. 198
- 63 Дж. Дж. Фрэзер, *Золотая ветвь*, вып. 3, с. 140-145.
- 64 Дж. Дж. Фрэзер, *Золотая ветвь*. Москва, 1980, с. 411.
- 65 Կ. Մելիք-Փաշայեան, նշ. աշխ. էջ 94, 130:
- 66 Ե. Լալայեան, *Վարանդա*, «Ազգագրական հանդես», 3, Թիֆլիս, 1898, էջ 347:
- 67 И. В. Рак, *Мифы древнего и раннесредневекового Ирана*, с. 474.
- 68 Н. Д. Флиттнер, *Земледельческие культы древней Месопотамии*. Сос. Эрмитаж. Труды отдела истории культуры и искусства Востока. Ленинград, 1939, с. 11


- 69 Հ. Խառատեան-Առաքելեան, *Հայոց ժողովրդական տոները*, Երևան, 2000, էջ 195:
- 70 Վ. Բդոյեան, նշ. աշխ. էջ 31-32:
- 71 Նոյն տեղում:
- 72 Հ. Խառատեան-Առաքելեան, նշ. աշխ. էջ 13:
- 73 Ե. Լալայեան, Բորչալուի գաղաթ,- «Ազգագրական հանդես» 10, էջ 263:
- 74 Любомир Миков, *Български великденски обреден фолклор*, София, 1990, с. 67.
- 75 Станка Янева, с. 17.
- 76 Ե. Լալայեան, Երկեր, Բ. 1, էջ 268
- 77 Мифы народов мира, т. II, с. 149.
- 78 Ս. Հայկունի, «*Հմինեան ազգագրական ժողովածու*», Բ. 2, Մոսկուա-Վաղարշապատ, 1906, էջ 297:
- 79 Ե. Լալայեան, Երկեր, Բ. 1, էջ 227:
- 80 И. В. Рак, նշ. աշխ., էջ 291:
- 81 Ա. Ղանալանեան, *Աւանդապատում*, Երևան, 1969, էջ 403, Ս. Յարութիւնեան, *Հայ առասպելաբանություն*, էջ 429:




Ակ. 1
Բրոնզե ապարանջան (1436, Ալավերդի), Բ. ա 15-րդ դ.



Ակ. 2
Բրոնզե կախիկ պահպանակներ (2514, Գետաշեն, Արցախ), Բ. ա 15-րդ դ.



Ակ. 3
Բուլղարիայում թխուող «տիկնիկ» կոչուող հացերը



Ակ. 4
«Տիկնանի» կարպետի մասիչ (8936/1), XIX դ., գ. Մարց, Թումանեանի մարզ (Գուգարք)



Ակ. 5
փայտ, գ. Ագարակ,
Աշտարակի շրջ. Մուշ, XIX դ. սկիզբ.



Ակ. 6
2430/27, գ. Ենոքաւան, Իջեւան Ք. ա II-րդ.
հազարամեակ



Ակ. 7
7077 Գաթանախշիկ, 1908 թ., գ. Բերդ,
Շամշադին, փայտ



Ակ. 8
128, Նոր Բայազետ Ք. ա II հազարամեակ,
Կաւանօթ



Ակ. 9
128, Նոր Բայազետ Ք. ա II հազարամեակ,
Կաւանօթ

ԳԱՐԻԷԼ ՄԷՆԷՎԻՇԵԱՆԸ՝ ՆԱԵԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿ

Ասատուր Փաշայեան

Հայ ժողովրդի մտաւոր մշակոյթի զարգացման պատմութեան մէջ Մխիթարեան միաբանութեան տուած գրական հունձքը իր նախադէպը չունեցող զարմանահրաշ մի երեւոյթ է, որի գիտական ուսումնասիրութիւնը սկզբնաւորուել է յիշեալ միաբանութեան հիմնադիր Մխիթար Սեբաստացու մահուանից անմիջապէս յետոյ:

Գրական-գեղարուեստական, հոգեւոր, ուսումնա-կրթական, թարգմանչական, աղբիւրագիտական եւ հայագիտական տարաբնոյթ բեղմնաւոր գործունէութեանը զուգահեռ Մխիթարեանները մեզ են ժառանգել բնագիտական հսկայածաւալ գրականութիւն: Դրանք առանձին մեզ հարկաւորութիւններ են, դասագրքեր, հանրամատչելի ուսումնասիրութիւններ, ինչպէս նաեւ բնագիտական թարգմանչական աշխատութիւններ:

Մխիթարեան միաբանութեան բնագիտական ժառանգութեան անդաստանում իրենց արժանի տեղն ունեն Վիեննայի Մխիթարեան միաբանութեան անդամ, լեզուաբան, ազգագրագէտ, թարգմանիչ եւ մանկավարժ Գաբրիէլ Մէնէվիշեանի (1864-1936) բնագիտական աշխատութիւնները: Դրանք, ցաւօք, գրեթէ անծանօթ են նոյնիսկ Հայ բնագիտութեան պատմութեամբ զբաղողներին: Գ. Մէնէվիշեանի մահախօսականում միայն մէկ նախադասութիւն է նուիրուած նրա բնագիտական ուսումնասիրութիւններին. «Ի վերջոյ յիշատակութեան արժանի է Հ. Մէնէվիշեանի գրական աշխատութեանց մէջ եռահատոր բնական պատմութիւնը՝ մէջ եռահատոր բնական պատմութիւնը՝ գրուած իբրեւ դասագիրք Հայ վարժա-

րաններու բարձրագոյն ընթացքին, որ վաւերացուեցան նաեւ Կ. Պօլսոյ ազգային ժողովին կողմէն»¹:

Գաբրիէլ Մէնէվիշեանի՝ 1897-ին Վիեննայում լոյս ընծայած «Պատկերազարդ բնական պատմութիւն»² ընդհանուր խորագիրը կրող երեք աշխատութիւններ՝ «Կենդանաբանութիւնը» (էջ 364), «Բուսաբանութիւնը» (էջ 344) եւ վերջին երրորդը՝ «Հանքաբանութիւնը» (139 էջ) Մխիթարեանի բնագիտական ժառանգութեան անքակտելի մի մասն են՝ գրուած գիտական բարձր մակարդակով:

Մինչեւ յիշեալ գրքերի լոյս տեսնելը Մխիթարեանները Վիեննայում եւ Վիեննայում լոյս էին ընծայել բուսաբանութեանը, կենդանաբանութեանը եւ հանքաբանութեանը նուիրուած առանձին, կամ դրանց մասնակիօրէն առընչուող, ինչպէս նաեւ թարգմանական բնոյթի շուրջ երկու տասնեակ աշխատութիւններ (3-15)³:

Գ. Մէնէվիշեանի նշուած երեք աշխատութիւններից Հայ բնագիտութեան պատմութեան համար յատկապէս մեծ հետաքրքրութիւն է ներկայացնում «Հանքաբանութիւնը», քանի որ մինչ այդ գրքի լոյս տեսնելը Հայ իրականութեան մէջ միայն հանքաբանութեանը նուիրուած որեւէ աշխատութիւն չէր հրատարակուել: Գիրքը հետեւեալ բաժիններից է՝ ներածութիւն, տարրեր, օքսիդէններ, աղակերպներ, թթուածնածածկուածներ, աղեր, երկրագիտութիւններ, տնկածին աղեր, երկրագիտութիւն եւ կազմագիտութիւն: Ահա թէ ինչ է գրել հեղինակը իր գրքի մասին. «Դասագիրքս ունի ժամանակիս՝ գիտական դա-